ИСПОЛЬЗОВАНИЕ ОНЛАЙН-ПЛАТФОРМ И ИНСТРУМЕНТОВ В ПРОЦЕССЕ ОБУЧЕНИЯ АНГЛИЙСКОМУ ЯЗЫКУ ДЛЯ СПЕЦИАЛЬНЫХ ЦЕЛЕЙ

Наира Вазгеновна Погосян
nairapoghosyan@yahoo.com

К.п.н., доцент,
Доцент кафедры педагогики и методики преподавания языков,
Государственный университет им. В.Я. Брюсова,
Ереван, Республика Армения

АННОТАЦИЯ

В настоящей статье рассматриваются дидактические возможности, предоставляемые рядом онлайн-платформ и инструментов, применяемых в процессе преподавания материалов профессионального английского языка, с учетом их использования по синхронным и асинхронным периодам обучения. В рамках данного исследования более подробно рассматриваются также особенности использования таких онлайн-платформ, как Microsoft Teams, Google Classroom, Webex, Sutori и Zoom, и инструментов, как Kahoot, Deck. toys, Kapwing, Edpuzzle, Explain Everything Whiteboard, Quizizz, Quizlet, Genially и Super Teacher Tools. Смешанное обучение профессиональному английскому языку с использованием вышеупомянутых платформ и инструментов способствует развитию самостоятельности и мотивации учащихся, поскольку последние становятся активными участниками учебного процесса, а преподаватель – их подспорьем, вдохновителем и консультантом.

Ключевые слова: платформа, инструмент, синхронный, асинхронный, взаимодействие, мотивация обучения.

Ներածություն

Ավանդական ուսուցման կողքին համաժամանակյա և տարաժամանակյա առցանց ուսուցման և ուսումնառության զարգացումը ժամանակի ընթացքում հանգեցրել է նրան, որ դասավանդողը գիտելիք փոխանցողից վերածվել է ուղղորդողի՝ անկախ ուսուցման գործընթացի իրականացման եղանակից: Տարաժամանակյա ուսուցման մասսայականացման հետ մեկտեղ առաջ եկան առցանց ուսուցման հարթակներ և գործիքներ, որոնք բազմազան են ընձեռած հնարավորությունների տեսանկյունից: Ընդ որում՝ այս հարթակներն ու գործիքները կիրառելի են ոչ միայն առկա, այլև հեռավար և համակցված ուսուցման համատեքստում:

Հարթակն այն միջավայրն է, որը հնարավորություն է տալիս նախապատրաստել, կազմակերպել և իրականացնել դասեր կամ դասընթացներ, որոնք պատրաստված են դասավանդողի կողմից սպասարկու գործիքների կիրառման միջոցով: Այսինքն՝ այս դեպքում «հարթակ»-ը գերակա է «գործիք»-ի նկատմամբ, քանի որ վերջինիս իրացման տիրույթն է: Մեկ այլ խումբ են կազմում անցանց գործիքները, որոնք առցանց հարթակների միջավայրում իրացվելու հնարավորություն ունեն: Հարկ է նշել, որ որոշ դեպքերում երկու հասկացությունները նույնանում են, երբ միևնույն առցանց միջոցը հանդես է գալիս և՛ որպես հարթակ, այսինքն՝ միջավայր լեզվի ուսուցման համար, և՛ որպես գործիք, այսինքն՝ լեզվի ուսուցման համար նյութերի ստեղծման միջոց [2: 75]:

Մասնագիտական անգլերենի դասավանդման գործընթացի արդյունավետությունն ապահովելու համար առցանց ուսուցման հարթակներ և գործիքներ ընտրելիս պետք է հաշվի առնել հետևյալ գործոնները.

Սովորողների մասնագիտական կարիքները.

- ոլորտային համապատասխանությունը. գործիքներն ու հարթակներն իրենց հնարավորություններով պետք է

համապատասխանեն տվյալ ոլորտին, օրինակ՝ բժշկություն, իրավաբանություն, SS և այլն,

- լեզվական կարիքները. արդյո՞ք հարթակը կամ գործիքն օգնում են յուրացնել տվյալ ոլորտի մասնագիտական լեզվանյութը կամ զարգացնել սովորողների հաղորդակցական հմտությունները, օրինակ՝ գրավոր հաղորդակցություն, բանավոր զեկուցումներ և այլն:

Տեխնիկական մատչելիությունը.

- հարթակի հասանելիությունը. արդյո՞ք այն հասանելի է բոլոր ուսանողներին հեռախոսով, համակարգչով, համացանցի արագությամբ և այլն,
- օգտագործման հնարավորությունը. պարզ ինտերֆեյս, ինտուիտիվ նավիգացիա և այլն:

Փոխներգործության մակարդակը. գործիքները պետք է խթանեն սովորողների ակտիվ մասնակցությունը՝ վիրտուալ քննարկումներ, վարժություններ, խաղային տարրեր, զույգերով/խմբային աշխատանքներ:

Վերահսկողությունն ու հետադարձ կապը. դասավանդողը պետք է կարողանա հետևել առաջադրանքների կատարմանը՝ ապահովելով անհատական հետադարձ կապ:

Անվտանգությունը և տվյալների պաշտպանությունը. Հարթակները պետք է ապահովեն ուսանողների տվյալների անվտանգությունը՝ խուսափելով անձնական տվյալների արտահոսքից:

Լեզվամշակութային համապատասխանությունը. օգտագործվող նյութերը պետք է համապատասխանեն ուսանողների մշակութային միջավայրին և լեզվամտածողությանը [1: 85]:

Ստորև ներկայացվում են մի շարք առցանց հարթակների ընձեռած դիդակտիկ հնարավորությունները՝ նկատի ունենալով վերոնշյալ գործոնները: Հարթակները ներկայացվում են խմբերով, ըստ՝ համաժամանակյա և տարաժամանակյա ուսուցման եղանակի:

Համաժամանակյա ուսուցման հարթակներ. Առանձնացվել են այն հարթակները, որտեղ դասախոս – ուսանող կապը տեղի է ունենում

իրական ժամանակում, այսինքն՝ առանձնացված է որոշակի ժամանակամիջոց առցանց հանդիպման համար, և լեզվանյութի ուսուցումը կատարվում է դասախոսի կողմից այդ ժամանակամիջոցի ընթացքում: Վերոնշյալի շրջանակներում մեր կողմից ընտրվել են հետևյալ առցանց հարթակները՝ **Zoom, Microsoft Teams, Webex, Google Classroom, Slack**: Նշված հարթակներով առցանց ուսուցումն ավելի է նմանվում փոխներգործուն կրթական միջավայրի, որտեղ գիտելիքը կարող է կառուցվել մասնագիտակասն հետաքրքրությունների համատեքստում առաջադրանքների կատարման շնորհիվ [4]:

Մասնագիտական անգլերեն դասընթացի համար մեր կողմից ընտրված համաժամանակյա ուսուցման առցանց հարթակները հնարավորություն են տալիս անցկացնել առցանց դասեր տեսազանգի միջոցով: Ընդհանուր հնարավորությունների համատեքստում կարելի է դիտարկել մասնակիցների թիվը, միացման կառավարումը, հանդիպումների տեսագրումը: Այս միջոցով կարելի է սովորողների հետ ժամանակ առ ժամանակ իրականացնել համաժամանակյա դասեր, ամփոփել ուղարկված նյութը, տեսադասի թեման, պատասխանել հարցերին կամ կատարել գործնական աշխատանքներ:

Լեզվանյութը ներկայացնելիս կարելի է կիսել էկրանը մասնակիցների հետ՝ կիրառելով մի շարք դիդակտիկ հնարավորություններ, այդ թվում՝ գրատախտակ դասախոսի կամ ուսանողների կողմից նշումներ կատարելու համար: Կարելի է կիսել էկրանը՝ ցուցադրելով ուսուցանվող լեզվանյութի վերաբերյալ այլ տեսաշարեր, ինչպիսիք են տեսահոլովակները, սահիկաշարերը, նկարները: Կարելի է օգտագործել նաև անմիջական արձագանքի գործիքները, որոնց միջոցով մասնակիցները կարող են անմիջապես արձագանքել, ինչն օգնում է վերջիններիս կենտրոնացած մնալ և արձագանքել հրահանգներին: Որոշ ծրագրեր հնարավորություն են տալիս նաև ուսանողներին բաժանել խմբերի նույն դաս-հանդիպման ընթացքում՝ գործնական աշխատանքի կազմակերպման համար:

Ուսումնասիրելով վերոնշյալը՝ առանձնացվել է մի քանի հարթակ, որոնք ամենաճկունն են հնարավորությունների ընձեռման տեսանկյունից։

Microsoft Teams հարթակը թույլ է տալիս ստեղծել տարբեր թեմատիկ տարածքներ (Channels), դասերը, քննարկումները, Ֆայլերը կամ նախագծերն առանձին դիտարկելու համար։ Այն կարելի է օգտագործել նույն լսարանի համար՝ առանձնացնելով դասի ընթացքը հանձնարարություններից կամ նախագծերից։ Հարթակում հնարավոր է կազմակերպել տեսադասեր, որոնց ընթացքում կարելի է դիդակտիկ նյութեր կիրառել տեսահոլովակների, սահիկաշարերի, նկարների, ձայնագրությունների, գրատախտակին բացատրությունների տեսքով։ Հարթակին կարելի է կցել նաև այլ գործիքներ, օրինակ՝ Kahoot!, Quizziz կամ այլ առցանց գործիքների միջոցով ստեղծված վարժություններ և առաջադրանքներ, ինչպես նաև կատարել գրառումներ և ստեղծել հստակ դասերի հաջորդականություն։

Ներկայացված հարթակի նման են գործում նաև Google Classroom, Webex Teams և Slack հարթակները։ Վերջիններիս ընձեռած դիդակտիկ հնարավորությունները գրեթե նույնն են, ինչ Microsoft Teams հարթակինը։ Եթե Microsoft Teams-ը չունի ներդիր գրատախտակ, ապա Webex-ը և Slack-ը նաև այդ հնարավորությունն են ընձեռում։ Այս երեք հարթակները լսարանի կամ խմբերի համար նյութերի փոխանակման, առաջադրանքների հանձնարարման և հանձնման, քննարկումների և գրառումների ընդհանուր միջավայր են, ուստի դիդակտիկ նյութեր կարելի է պատրաստել արտաքին դաշտում և համակարգել նշված միջավայրերում [3: 105]։

Տարաժամանակյա ուսուցման հարթակներ. Այստեղ ներառված են այն հարթակները, որոնք հնարավորություն են տալիս առարկայական ծրագրով նախատեսված բովանդակությունը ուղղորդումներով սովորողներին տրամադրել դասախոսի կողմից մշակված նյութի, տեսադասերի և վարժությունների տեսքով։ Այս դեպքում դասավանդողի կողմից կարող են սահմանվել վերջնաժամկետներ՝ սովորողներին ժամանակային առումով ուղղորդելու համար։

Հաջորդիվ դիտարկվում են տարաժամանակյա ուսուցման համար առանձնացված որոշ հարթակների ընձեռած դիդակտիկ հնարավորությունները: Պարզ է, որ համաժամանակյա ուսուցման հարթակների կիրառման դեպքում դասի պլանը մշակվում է դասավանդողի կողմից, սակայն պատկերն այլ է տարաժամանակյա ուսուցման հարթակների դեպքում: Որոշ հարթակներ թույլ են տալիս նաև արդեն իրենց բազայում առկա մշակված դասերի գործածություն [5]: Այս խմբում ուսումնասիրվել են **Kahoot!, Quizlet, Deck.Toys, EdPuzzle, Quizizz** հարթակները:

Թվարկված հարթակները հնարավորություն են տալիս կազմել դաս կամ դասընթաց, որը կարող է ներառել տեսահոլովակ, ձայնագրություն, յուրաքանչյուր տեսակի վեբ հղում, ֆայլ, սահիկաշար: Ուսուցանվող մասնագիտական լեզվանյութի վերաբերյալ կարելի է ավելացնել հարցեր, իրականացնել ընկալման ստուգում, կատարել մեկնաբանություններ՝ դասախոս – ուսանող, ուսանող – ուսանող, ուսանող – դասախոս փոխներգործությամբ: Լայն հնարավորություններ են ընձեռում նախագծահեն ուսումնառության և սովորողների առաջնորդության համար նախատեսված բաժինները, որտեղ ուսանողը դիդակտիկ նյութի և՛ ստեղծողն է, և՛ հասցեատերը:

Այսպիսով՝ ներկայացված հարթակները, մի շարք տարբերություններից բացի, ունեն նաև ընդհանրություններ: Օրինակ՝ հինգ հարթակներն էլ դասի շրջանակում տալիս են առաջադրանք ստեղծելու, ինչպես նաև գնահատման հնարավորություն: Այդուհանդերձ, առաջադրանքները տարբեր են: Օրինակ՝ Edpuzzle հարթակն աշխատում է հոլովակների հետ և առաջադրանքները կազմում է հենց հոլովակի ներսում՝ թույլ տալով նաև տեսնել, թե սովորողները հոլովակի որ հատվածն են դիտել:

Թե՛ սովորողի և թե՛ դասավանդողի համար բացառիկ հնարավորություններ է առաջադրում Deck.Toys հարթակը: Այստեղ դասավանդողը հնարավորություն ունի տարբերակված մոտեցման համատեքստում պատրաստել դասընթաց՝ կցելով արդեն պատրաստի նյութեր

կամ ստեղծելով դրանք կայքի միջոցով: Դասընթացի յուրահատկությունը նրանում է, որ յուրաքանչյուր սովորող ինքն է ընտրում դասընթացի իր ճանապարհը: Այդպիսով՝ յուրաքանչյուր սովորողին հասանելի է դառնում նախօրոք կազմված դասընթացի անհատական տարբերակ: Ուսուցիչը հնարավորություն ունի տեսնել սովորողների ուսումնառության ընթացքը և հետագիծը:

Նմանատիպ դիդակտիկ հնարավորությունների կազմով է ներկայանում Kahoot! հարթակը: Այն նույնպես, սահիկաշարերի միջոցով դասընթաց նախագծելու հնարավորություն տալուց բացի, թույլ է տալիս առանձին ստեղծարար դասեր պլանավորել վիրտուալ դասարանում:

Ուսումնասիրելով անգլերեն լեզվանյութի ուսուցման առցանց գործիքները և կիրառելով դրանք ուսումնական գործընթացում՝ կարող ենք նշել, որ գոյություն ունեն գործիքների կիրառության մի շարք առանձնահատկություններ, որոնք պետք է հաշվի առնվեն վերջիններս ընտրելիս և կիրառելիս: Տվյալ պարագայում, մասնավորապես, հարկ է հաշվի առնել, թե որքանով են դրանք համապատասխանում դասի կամ դասընթացի դիդակտիկական նպատակներին: Ստորև ներկայացվում են առցանց գործիքների կիրառման հնարավորությունները մասնագիտական անգլերենի դասընթացում.

- սահիկաշարի պատրաստում,
- տեսահոլովակի ստեղծում,
- փոխներգործուն առաջադրանքների, վարժությունների և խաղերի ստեղծում,
- ընդհանուր դասընթացի մշակում:

Նախ անդրադառնանք սահիկաշարի ստեղծման համար նախատեսված **Kahoot!, Sutori, Genially, Buncee** գործիքների կիրառմանը:

Kahoot!-ում պատրաստված սահիկաշարերը մի քանի գործառույթ են կատարում՝ տեղեկույթի հաղորդում, փոխազդում, ներգրավում: Տեղեկույթի հաղորդման համար կարելի է ստեղծել անսահմանափակ թվով սահիկներ կամ ներմուծել սահիկներ արդեն իսկ առկա

սահիկաշարից: Սովորողների ուշադրությունը պահելու համար խորհուրդ է տրվում ամեն երկու-երեք տեղեկատվական սահիկից հետո ավելացնել որևէ այլ սահիկ հաջորդ երկու բաժիններից:

Փոխներգործուն սահիկներն օգտագործվում են լսարանի հետ կապն ապահովելու համար: Սա կարող է արվել դասի սկզբում, օրինակ՝ ստուգելու թեմայից տեղեկացվածության աստիճանը, դասի ընթացքում կամ վերջում՝ վիկտորինա, հարցում կամ «բառերի ամպ» հարցեր (word cloud questions) ստեղծելու համար:

Վերջին գործառույթը ներգրավումն է, որի շրջանակում կարելի է դասի կարևորագույն կետերի վերաբերյալ հարցեր տեղադրել սահիկաշարում: Ներգրավման վարժություն-սահիկները տեղադրվում են դասի վերջում 3–5 վիկտորինա-հարցերի տեսքով: Խորհուրդ է տրվում այս սահիկների առկայության մասին սովորողներին հաղորդել նախօրոք: Այն թույլ է տալիս սովորողների ուշադրությունը կենտրոնացնել դասի հիմնական նյութի վրա:

Սահիկաշարի ստեղծման այլ առանձնահատկություններ ենք հանդիպում Sutori հարթակում: Այստեղ կարելի է ստեղծել սահիկաշարեր, օգտվել արդեն պատրաստի բազայից կամ սովորողներին հանձնարարել ստեղծել իրենցը: Հարթակը հնարավորություն է տալիս սահիկաշարին կցել յուրաքանչյուր նյութ համացանցից, տեսաձայնագրություն, աուդիոնյութ կամ նկար: Հնարավոր է նաև իրականացնել ձևավորող գնահատում ներդրված վիկտորինաների միջոցով: Դասավանդողը կարող է նաև սովորողներին հանձնարարել ստեղծել սահիկաշարեր (օրինակ՝ խմբերով աշխատելիս, նախագիծ ներկայացնելիս և այլն), ինչպես նաև՝ փոխադարձ գնահատման համատեքստում զարգացնել խմբի կամ զույգի անդամին հետադարձ կապ տալու կարողությունները՝ մեկնաբանելով միմյանց աշխատանքները:

Genially հարթակը հնարավորություն է տալիս ստեղծել տարբեր նյութեր՝ ինքնակենսագրական, հաշվետվողական նյութեր, խաղեր, ինչպես նաև սահիկաշարեր և տեսասահիկաշարեր: Սահիկաշարերի ա-

ռանձնահատկությունը հարթակում այն է, որ կան հարյուրավոր ձևանմուշներ և հազարավոր ռեսուրսներ, որտեղից ուսուցիչները կարող են օգտվել նյութ պատրաստելիս:

Նույն կերպ է աշխատում նաև Buncee հարթակը, որտեղ սահիկաշարերը կարելի է ստեղծել՝ հիմնվելով հազարավոր ձևանմուշների վրա: Այստեղ կան հուշումներ, որոնց միջոցով դասը հետաքրքիր կլինի բոլոր սովորողների համար, քանի որ նյութը ներկայացվում է գրավոր, վիզուալ և աուդիո տեսքով: Ընդ որում՝ աուդիո ձայնագրությունը կատարվում է նույն հարթակում: Հնարավորություն կա բացել օգտահաշիվ ողջ խմբի, կուրսի կամ համալսարանի համար, որտեղ ադմինիստրատորը կարող է հետևել ընդհանուր գործունեությանը, իսկ դասավանդողները կարող են հետևել սովորողների առաջընթացին: Այս գործիքի շնորհիվ կարելի է կազմակերպել սահիկաշարի անհատական պատրաստում և ներկայացում՝ հաշվի առնելով սովորողների անհատական մասնագիտական հետաքրքրություններն ու լեզվական կարիքները [6: 23]:

Տեսաձայնագրության միջոցով դասեր պատրաստելու համար առաձնացվել են **EdPuzzle, Kapwing, Genially, Explain Everything Whiteboard** հարթակները՝ համապատասխան գործիքներով:

EdPuzzle հարթակը հնարավորություն է տալիս ձայնագրել սեփական հոլովակը կամ օգտվել պատրաստի հոլովակներից այնպիսի հարթակներում, ինչպիսիք են **YouTube, Khan Academy, Crash Course** և այլն: Հարթակի առանձնահատկությունն այն է, որ հնարավորություն կա յուրաքանչյուր հոլովակ վերափոխել դասի՝ զուգակցելով այն փոխներգործուն վարժություններով: Օրինակ՝ կարելի է հոլովակի անհրաժեշտ հատվածում ներմուծել հարցեր, որոնց պատասխանելուց հետո միայն սովորողները կկարողանան առաջ անցնել: Հնարավորություն կա հետ գնալ և նորից նայել հատվածները պատասխանելու համար: Հնարավոր է հատվածի ավարտին դնել ընտրովի պատասխան, կարճ պատասխանով հարց կամ ուղղակի նշում: Իսկ դասավանդողը հնա-

բավորություն կունենա հետևել աշակերտների առաջընթացին, պարզել, թե որ հատվածը քանի անգամ է դիտվել՝ հետագայում վերլուծություններ կատարելու համար։

Դիտարկվող հաջորդ հարթակը՝ Kapwing-ը, հնարավորություն է տալիս հոլովակների հետ աշխատել ամենատարբեր անկյուններից։ Կարելի է հոլովակներին ավելացնել ենթագրեր կամ որևէ տեքստ, կտրել հոլովակը կամ աուդիոձայնագրությունը, ավելացնել ձայնագրություն որևէ հոլովակի կամ ֆոտոշարքի, կարելի է փոխել հոլովակի արագությունը։ Օրինակ՝ մասնագիտական լեզվանյութի արդյունավետ յուրացման և ամրապնդման նպատակով ուսուցիչը կարող է դանդաղեցնել արագ խոսքը սկսնակ սովորողների համար կամ այլ նպատակահարմարության դեպքում։

Այլ է Genially հարթակի առանձնահատկությունը։ Այս հարթակում տարբերակ ունենք ստեղծել հոլովակներ սահիկաշարերից։ Այն հնարավորություն է տալիս սովորողներին ներկայացնել վիզուալ բովանդակությունը ձայնային բացատրության հետ զուգահեռ։

Երբ խոսքը վերաբերում է վիզուալ բովանդակությանը, որը հեշտ կարելի է տեղափոխել և տեղավորել գրատախտակի վրա, կարելի է օգտվել Explain Everything Whiteboard-ի գործիքներից։ Այստեղ հնարավորություն կա «գրատախտակին» տեղադրել նկարներ, հոլովակներ, տեքստեր, այլ տեսակի ֆայլեր, որոնք այնուհետև կարելի է տեղաշարժել, համակցել, համադրել և բացատրել կատարվող գործընթացը՝ ձայնագրելով խոսքը։ Այս ամենի միացումից ստացվում է անիմացիոն տեսահոլովակ։

Փոխներգործուն վարժությունների կամ խաղերի համար կարելի է կիրառել հետևյալ հարթակները՝ **Kahoot!, Quizziz, SuperTeacherTools, Quizlet:** Այս հարթակները խորհուրդ է տրվում օգտագործել ընկալման ստուգումներ կամ ամփոփումներ իրականացնելու համար։ Դրանց օգնությամբ կարելի է կազմել մի քանի պատասխանով, ճիշտ է – սխալ է, մեկ պատասխանով կամ կարճ պատասխան ենթադրող հարցեր։ Kahoot! և Quizziz հարթակների առավելությունն այն է, որ դրանք հնարավորություն են տալիս արդյունքներն ամփոփել՝ ըստ անհատական

պատասխանների, ինչը մրցակցային միջավայր է ստեղծում և խթանում սովորողների ներգրավվածությունը:

SuperTeacherTools հարթակը մի քանի հայտնի խաղեր ստեղծելու հնարավորություն է տալիս, որոնցից է «Ո՞վ է ուզում դառնալ միլիոնատեր» խաղը: Հարթակը հարմար է գործածել նաև պատահական ընտրության համար՝ օրինակ, հարցումների դեպքում:

Այսպիսով՝ առցանց գործիքների կիրառմամբ մշակվել և կիրառվել են մասնագիտական անգլերենի բառապաշարային և քերականական նյութի ուսուցման, ինչպես նաև հաղորդակցական (ընկալողական և արտադրողական) կարողությունների զարգացմանն ուղղված վարժություններ մասնագիտական լսարանի համար: Նշված վարժությունները ստեղծվել են Quizlet, Quizizz, Kahoot, Genially և EdPuzzle գործիքների միջոցով և ներառում են առաջադրանքներ բառապաշարային լեզվանյութի ուսուցման համար, ինչպիսիք են «համապատասխանեցնել բառը նշանակությանը» և «գտնել ունկնդրած բառը»: Քերականական լեզվանյութի ուսուցման համար ընտրվել են «Ճի՞շտ, թե՞ սխալ» և «վիկտորինա-հարց» առաջադրանքները: Ունկնդրական և բանավոր խոսքային կարողությունների զարգացման համար դիտարկվել «բազմակի ընտրության հնարավորությամբ» և «բաց պատասխանով» հարցերը, ինչպես նաև «խմբային քննարկման» ծավալումը: Իսկ ընթերցանական և գրավոր խոսքային կարողությունների զարգացման համար ընտրվել են «պարբերության վերնագրում» և «ազատ շարադրանք» առաջադրանքները:

Ընդհանրացնելով վերոնշյալը՝ կարող ենք եզրահանգել, որ ուսուցման համաժամանակյա և տարաժամանակյա հարթակների հնարավորությունները որոշ առումներով կրկնվում են, իսկ ավելի հաճախ հարթակները միմյանց լրացնում են հնարավորությունների փոխգործածության միջոցով: Պարզ դարձան նաև որոշ առանձնահատկություններ, որոնք բնորոշ են և կարող են կիրառվել միայն նշված հարթակի շրջանակում: Հարկ է փաստել նաև, որ առցանց գործիքների ընձեռած հնարավորությունները ևս միասեռ չեն և կարող են խոսքային կարողությունների զարգացման մի փուլում լինել արդյունավետ, մյուսում՝

ոչ: Առցանց գործիքների այս առանձնահատկությունը հարկ է հաշվի առնել դրանց կիրառումից առաջ՝ հաջորդող դասի կամ դասերի նպատակները, խնդիրներն ու վերջնարդյունքերը սահմանելիս:

ЛИТЕРАТУРА

1. *Gavin D. & Nicky H.* How to Teach English with Technology. – Pearson, Longman, 2008. – 194 p.
2. *Harman K. & Koohang A.* Discussion Board: A Learning Object. Interdisciplinary Journal of e-Skills and Lifelong Learning, 2005, Vol. 1, Issue 1. – PP. 67–77.
3. *Mabrito M.* A Study of Synchronous versus Asynchronous Collaboration in an Online Business Writing Class. The American Journal of Distance Education, 2006, Vol. 20, Issue 2. – PP. 93–107.
4. University of Michigan [Electronic resource]. – Mode of access: https://online-teaching.umich.edu/articles/synchronous-tools-and-how-to-use-them/ (Date of access: Nov 10, 2024).
5. University of Miami [Electronic resource]. – Mode of access: https://academic-technologies.it.miami.edu/explore-technologies/technology-summaries/asynchronous-communication-tools/index.html (Date of access: Aug 05, 2025).
6. *Watts L.* Synchronous and asynchronous communication in distance learning: A Review of the Literature. Quarterly Review of Distance Education, 2016, Vol. 17, Issue 1. – PP. 23–32.

ԱՌՑԱՆՑ ՀԱՐԹԱԿՆԵՐԻ ԵՎ ԳՈՐԾԻՔՆԵՐԻ ԿԻՐԱՌՈՒՄԸ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԱՆԳԼԵՐԵՆԻ ՈՒՍՈՒՑՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑՈՒՄ

Ն.Վ. Պողոսյան

nairapoghosyan@yahoo.com

Մ.գ.թ., դոցենտ,

Մանկավարժության և լեզուների դասավանդման մեթոդիկայի ամբիոնի դոցենտ,

Վ.Յա. Բրյուսովի անվ. պետական համալսարան,
Երևան, Հայաստանի Հանրապետություն

ԱՄՓՈՓՈՒՄ

Սույն հոդվածում քննության են առնվում մասնագիտական անգլերեն լեզվանյութի ուսուցման գործընթացում կիրառելի մի շարք առցանց հարթակների և գործիքների ընձեռած դիդակտիկ հնարավորությունները՝ հաշվի առնելով դրանց կիրառումն ըստ համաժամանակյա և տարաժամանակյա ժամանակամիջոցի: Ապա ավելի մանրամասն անդրադարձ է արվում նաև այդ հարթակների և գործիքների կիրառման առանձնահատկություններին: Առցանց հարթակներից դիտարկվում են Microsoft Teams, Google Classroom, Webex, Sutori և Zoom-ը, իսկ գործիքներից՝ Kahoot!, Deck.toys, Kapwing, Edpuzzle, Explain Everything Whiteboard, Quizizz, Quizlet, Genially և Super Teacher Tools-ը: Վերոնշյալ հարթակների և գործիքների ներգրավմամբ մասնագիտական անգլերենի համակցված ուսուցումը խթանում է սովորողների ինքնուրույն ուսումնառության կարողությունները և մոտիվացիան, քանի որ սովորողը դառնում է ուսումնական գործընթացի ակտիվ մասնակիցը, իսկ ուսուցիչը՝ օժանդակող, խրախուսող և խորհրդատու:

Բանալի բառեր՝ հարթակ, գործիք, համաժամանակյա, տարաժամանակյա, փոխներգործություն, ուսումնառության մոտիվացիա:

USE OF ONLINE PLATFORMS AND TOOLS WITHIN ESP INSTRUCTION

N. Poghosyan
nairapoghosyan@yahoo.com

PhD, Candidate of Sciences (Pedagogy), Associate Professor,
Associate Professor at the Department of Pedagogy and Methods of Teaching Languages,
Brusov State University,
Yerevan, Republic of Armenia

ABSTRACT

This article highlights the didactic opportunities provided by a number of online platforms and tools applicable in the process of teaching ESP (English for Specific Purposes) materials, considering their use within synchronous and asynchronous time period. Futhermore, a comprehensive analysis is made of the specifics of the use of these platforms and tools within ESP instruction. Online platforms include Microsoft Teams, Google Classroom, Webex, Sutori, and Zoom, and tools include Kahoot!, Deck.toys, Kapwing, Edpuzzle, Explain Everything Whiteboard, Quizizz, Quizlet, Genially, and Super Teacher Tools. Blended learning / teaching of ESP with the integration of these platforms and tools promotes learner autonomy and motivation, as students become an active participant in the learning process where the ESP teacher acts more as a facilitator and consultant.
Keywords: platform, tool, synchronous, asynchronous, interaction, learning motivation.

Информация о статье:
статья поступила в редакцию 24 августа 2025 г.,
подписана к печати в номер 16 (20) / 2025 – 20.12.2025 г.